



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Մարգարիտ Դանիելյանը, Գարեգին Շաբոյանը, Հրանտիկ Մելիքյանը, Վարուժան Հարությունյանը, Հովհաննես Մարգարյանը, Թինա Մելքոնյանը, Հերմինե Վարդանյանը

#### Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Գոհար Խաչատրյան, Նաիրա Հարությունյան, Լիլիթ Գասպարյան, Թամարա Գյաղուկյան

#### Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյանը

#### Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Գոհար Խաչատրյանը

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը. 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 24-ի թիվ 47-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /գեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/: 2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /գեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 47-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 77 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման մեջ

կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները :

1) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. Բաժին 1, խումբ 6, դաս 1, 2161 տողում «89591.8» թիվը փոխարինել «88591.8» թվով,

բ. Բաժին 8, խումբ 2, դաս 4, 2824 տողում «16200.0» թիվը փոխարինել «17200.0» թվով :

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա. Հոդված 5129, 5123 տողում «100.0» թիվը փոխարինել «1100.0» թվով,

բ. Հոդված 5134, 5134 տողում «47383.0» թիվը փոխարինել «46383.0» թվով:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 92-Ա/

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳԵՂԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՁՈՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԱՆՆԱ ՀԱՅԿՅԱՆ

ՄՀԵՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նիստին արձանագրեց՝ Գոհար Խաչատրյանը

